Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-01-2021 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Տերյան 74
1.3 Պետական գրանցման համարը	222.160.699243
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2002-06-10
1.5 ՀՎՀՀ-ն	01507028
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)99616311
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.anau.am
1.8 Էլեկտրոնային փոստը	rector@anau.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
ՀՀԿԳՄՍ նախարարություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Արմեն Հարությունյան	
Կարեն Ղարախանյան	
Արեգ Խոջոյան	
Իրինա Ղափլանյան	
Գոհար Մամիկոնյան	
Գարիկ Սարգսյան	
Գագիկ Սարդարյան	
Նունե Սարուխանյան	
Թոռնիկ Ալիյան	
Սերգեյ Երիցյան	
Աղավարդ Խաչատրյան	
Սարգիս Խանդանյան	
Քրիստինե Խուրշուդյան	
Արմինե Հովհաննիսյան	
Արփինե Մկրտչյան	
Հակոբ Խաչատրյան	
Աշոտ Գիլոյան	
Գոռ Խաչատրյան	
Նունե Սիմոնյան	
Գուրգեն Եղիազարյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	

Վարդան Ուռուտյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1187	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Բարձրագույն հետբուհական կրթություն նպաստ և կրթաթոշակ	853067343
	Գիտական թեմաներ, ենթակառուցվածքների պահպանում և զարգացում	336032300
	ՆՄՀ Ծիգ-կրթական ծրագիր	47803652
	ՀՀԱՆ - COVID19 ծրագիր	3646419
	Էրազմուս- ՀԳ-2 ABIONET	23791466
	Հյուս Կովկասում զոռն. ինֆ ատլ նխպ	10665499
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ՊՀԾ-WFP	23326227
	Նորվեգիա -համագծրագիր	392986
	GIZ-կրթական	3728000
	ՖԱՕ	9633732
	Տնտ պայմանագրեր և այլ ծառայություններ	100011000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գյուղմթերքի իրացում	71249079
	Վճարովի ուսուցումից	1048402606
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Լաբարատոր սարքավորումներ	24867750
	Արտադրատնտեսական գույք աթոռ,սեղան,պահարան,ապակյա գրատախտակ	9752174
	Համակարգչային տեխնիկա	8974435
	Սարքեր և սարքավորումներ	5887443
	Համակարգչային ծրագրեր	537500
	Գյուղ՝ սարքավորումներ՝կաթիլային ոռոգման համակարգ,ջրավազան	8622585
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		

11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
Բարձրագույն և հետբուհական կրթություն	1911747112
Միջին մասնագիտական,Հանրակրթական կրթություն	240335500
Գիտական ծրագրեր	323260144
ՆՄՀ Ծիգ Կրթական	34237720
Վիեննայի BOKU համալսարան	25509565
Էրազմուս ՀԳ-2 ABioNet	23130040
Էրազմուս ՀԳ-2TOPAS	26052826
ՀյուսԿովկասում զոոնոտիկ ինֆեկցիաների ատլաս	9830958
ՊՀԾ-WFP	15370505
Ֆրուտենիա	12177670
ՖԱՕ	9633732
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2631285772
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2631285772

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 7 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

bakertilly

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307/309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

31.05.2021թ.
N *022115*
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գնորգյան
Աուդիտորական ծառայությունների իրականացման
Լիցենզիաթիվ ԱԾ- 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» Հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայիպահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքնարտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ– ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք անում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյո՞ք առկա է դեպքերի կամ իրավիճակների առնչությամբ էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Հիմնադրամի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակից ենք դարձնում աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակին ու ժամկետներին, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Աուդիտոր

Ա. Կարապետյան

31.05.2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2020թ.	2019թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,326,697	1,238,260
Ոչ նյութական ակտիվներ		9,263	2,724
Հետաձգված հարկային ակտիվներ	9	5,803	16,607
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,341,763**	**1,257,591**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	184,894	186,775
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	887,068	577,022
Շահութահարկի գծով կանխավճար		-	4,051
Ժամկետային ավանդներ	7	161,696	400,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	495,408	563,112
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,729,066**	**1,730,960**
Ընդամենը ակտիվներ		**3,070,829**	**2,988,551**
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	824,959	789,047
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**824,959**	**789,047**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	261,637	296,307
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	284,494	148,827
Ընթացիկ պահուստներ	13	32,241	92,260
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**578,372**	**537,394**
Զուտ ակտիվներ		**1,667,498**	**1,662,110**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**3,070,829**	**2,988,551**

Վարդան Ուռուտյան
Ռեկտոր

31.05.2021թ.

Մարիամ Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2020թ.	2019թ.
Հասույթ	14	1,659,641	1,761,290
Վաճառքի ինքնարժեք	17	(1,267,973)	(1,272,334)
Համախառն շահույթ		**391,668**	**488,956**
Դրամաշնորհներից եկամուտ	15	1,221,946	1,201,299
Ծրագրերի գծով ծախսեր	18	(1,221,946)	(1,201,299)
Իրացման ծախսեր		(11,322)	-
Վարչական ծախսեր	19	(226,022)	(195,798)
Այլ եկամուտ	16	127,297	91,806
Այլ ծախսեր	20	(246,727)	(368,424)
Գործառնական գործունեությունից արդյունք		**34,894**	**16,540**
Ֆինանսական եկամուտ	21	39,475	36,153
Փոխարժեքային տարբերությունից վնաս		1,499	(2,345)
Արդյունք մինչև հարկումը		**75,868**	**50,348**
Շահութահարկի գծով ծախս	22	(86,565)	(29,334)
Տարվա զուտ արդյունք		**(10,697)**	**21,014**
Այլ համապարփակ արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**(10,697)**	**21,014**

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Պահուստային կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	**353,674**	**1,287,390**	**1,641,064**
Տարվա արդյունք	30	2	32
Հատկացում պահուստաֆոնդին	-	21,014	21,014
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**353,704**	**1,308,406**	**1,662,110**
Ճշգրտումներ		16,085	16,085
Տարվա արդյունք	-	(10,697)	(10,697)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**353,704**	**1,313,794**	**1,667,498**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(10,697)	21,014
Ճշգրտումներ		
Մաշվածության, ամորտիզացիայի ծախս	146,547	112,544
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	21,851	76,009
Շնորհներից եկամուտ	(1,221,946)	(1,201,299)
Շահութահարկի գծով ծախս	86,565	29,334
Տոկոսային եկամուտ	(39,475)	(36,153)
Դեբիտորական պարտքերի դուրսգրումից ծախս	6,442	-
Ընթացիկ պահուստների փոփոխություն	(60,019)	31,420
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(1,499)	2,345
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(1,072,231)**	**(964,786)**
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների (աճ)/նվազում	(342,410)	(208,703)
Պաշարների աճ	8,315	(21,399)
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	(19,626)	5,851
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	**(1,425,952)**	**(1,189,037)**
Ստացված շնորհներ, զուտ	1,291,467	1,205,103
Վճարված շահութահարկ	(29,704)	(32,606)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(164,189)**	**(16,540)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(187,734)	(269,216)
Ժամկետային ավանդների վերադարձ/(տրամադրում)	238,304	(240,000)
Ստացված տոկոսային եկամուտ	39,475	36,153
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**90,045**	**(473,063)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մարված վարկեր, զուտ		-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		-
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ (նվազում)/աճ	(74,144)	(489,603)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	6,440	(2,345)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում (տե՛ս ծանոթագրություն 8)	563,112	1,055,060
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (տե՛ս ծանոթագրություն 8)	**495,408**	**563,112**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.08.2021 20:20